ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 1062-Ա

ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի պահանջով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի պահանջները, հիմք ընդունելով Մասիս քաղաքային համայնքի ավագանու 11.09.2020 թվականի N 112-Ա որոշումը **որոշում եմ՝**

1.Մասիս քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող ՀՀ Արարատի մարզ Մասիս քաղաք 3-րդ թաղամաս Հերացու փողոց թիվ 18/72 հասցեում գտնվող ավտոտնակը /արտաքին մակերեսը՝ 30,4 քմ, ներքին մակերեսը 23,4 քմ/ և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0,00304 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը /ծածկագիր՝ 03-003-0108-0019/ ուղղակի վաճառքով օտարել Հրանտ Ղամբարյանին:

2.Ավտոտնակի համար մուծման վճարը կազմում է 63840 /վաթսուներեք հազար ութ հարյուր քառասուն / ՀՀ դրամ/ 1քմ-ի արժեքը 2100 /երկու հազար մեկ հարյուր/ ՀՀ դրամ:

3. Հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 89376/ութսունինը հազար երեք հարյուր յոթանասունվեց/ ՀՀ դրամ /1 քմ-ի արժեքը 2940 /երկու հազար ինը հարյուր քառասուն/ ՀՀ դրամ:

4.Հողամասը օտարելուց հետո համայնքի հողային և հաշվապահական հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություններ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

18 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թ.
Ք.ՄԱՍԻՍ